ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

№ 21

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Մելքոնյան Ռուբեն պ.գ.դ., պրոֆեսոր (խմբագիր)
Մելիքյան Գուրգեն բ.գ.թ., պրոֆեսոր
Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ
Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ
Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր
Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ
Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր
Կարապետյան Ռուբեն պ.գ.դ.
Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.դ.
Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան)
Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան)
Էքմեքչյան Լեոնա PhD (ԱՄՆ)
Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա)
Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ., պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Արաբագիտություն

Գոռ Գևորգյան
ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019) 7-17

Արամ Գասպարյան
ԱԼԺԻՐԻ ԲԵՐԲԵՐՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՇԱՐԺՈՒՄԸ (1962-1999 թթ.) 18-30

Տաթևիկ Մկրտչյան, Միքայել Հովհաննիսյան
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐԱԲԱԼԵՁՈՒ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԱՅՔԵՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՒԼԵՐՈՒՄ (2016, 2020 ԹԹ.). ԴԻՄԿՈՒՐՄՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ 31-49

Արմինե Հակոբյան
ԱԲՈՒ ԲԱԿՐ ԱՍ-ՍՈՒԼԻԻ «ԱԽԲԱՐ ԱԼ-ՇՈՒԱՐԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՄՊՈԶԻՑԻԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՑԵՊՏԸ 50-65

Մոհամմեդ Հաջ Իբրահիմ
ԱԾԽԱԶՐԱԾՆԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԴԵՐԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 66-78

Խադիջե Ահմադ Մեհրաբի
ՆԱԽԴԻՐՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՂՈՒՐԱՆԻ ՏԵՔՍՏՈՒՄ 79-86

Իրանագիտություն

Անուշ Ստամբոլցյան
ԻՄԱՄ ԽՈՄԵՅՆՈՒ «ՎԵԼԱՅԱԹ-Ե ՖԱՂԻՀ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ 87-97

Ալեն Հայրապետյանց
ՆՈՐԱԳՅՈՒՏ DNF ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԸ՝ «ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ, ԹԵ՞ ԽՈՐՀՈՒՐԴ» 98-110

Նունիկ Դարբինյան
ԻՐԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ ՀԱՆԴԻՊՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ՇՈՒՐՋ 111-133

Տիգրան Չանդոյան
ՔՐԴԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿ-ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 134-144

Թյուրքագիտություն

Կուրապյ Ուրազաևա, Վերոնիկա Ռազումովսկայա, Ալեքսանդր Սաֆարյան
ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՐԱՆՍՄԻՍԻԱՅԻ ՁԵՎ: ՂԱԶԱԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ՝ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 145-166

Արշակ Գևորգյան
ՍՏՎԵՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻԲՐԻԴԱՅԻՆ ՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ 167-186

Մարգարիտա Կրտիկաշյան
ՏԻԳՐԱՆ ՉՈՒԽԱՋՅԱՆԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ 187-200

Սամվել Ռամազյան *
ԵՎՐՈՊԱՅՈՒ (ՖՐԱՆԿԻ) ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԵՎ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԷՊՈՍՆԵՐՈՒՄ 201-223

Անի Ոսկանյան
ԱԴԱՆԱՅԻ ՆԱՀԱՆԳԻ ՉՈՐՔ-ՄԱՐԶՊԱՆ ԳԱՎԱՌԱԿԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ 224-238

***

Ռուսլան Ցականյան
ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ (ԳԵՐԵՐԿԱՐ, ԵՐԿԱՐ, ՄԻՋԻՆ, ԿԱՐՃ ԵՎ ԳԵՐԿԱՐՃ ԹՎԱԳՐՈՒՄՆԵՐ) 239-247

Հովհաննես Խորիկյան
ԿԱՊԱԴՈՎԿԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ 248-261

CONTENT

Arabic Studies

Gor Gevorgyan
EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI 7-17

Aram Gasparyan
ALGERIAN BERBERS MOVEMENT FOR THE PRESERVATION OF NATIONAL IDENTITY (1962-1999) 18-30

Tatevik Mkrtchyan, Mikayel Hovhannisyan
COVERAGE OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT IN ARABIC-LANGUAGE MEDIA DURING BOTH WAR PERIODS (2016, 2020): DISCOURSE ANALYSIS 31-49

Armine Hakobyan
COMPOSITION AND AUTHOR FUNCTION OF ABU BAKR AS-SULI'S "AKHBAR AL-SHU'ARA" 50-65

Mohammed Haj Ibrahim
THE ROLE OF HYDROCARBON RESOURCES IN THE CONTEXT OF THE SYRIAN CONFLICT 66-78

Khadije Ahmad Mehrabi
THE PROBLEM OF ALTERNATION OF PARTICLES IN THE TEXT OF THE QUR'AN 79-86

Iranian Studies

Anush Stamboltsyan
THE RELIGIOUS, HISTORICAL AND POLITICAL PRINCIPLES OF IMAM KHOMEINI'S "VELAYAT-E FAQIH" DOCTRINE 87-97

Alen Hayrapetyanc
THE INTERPRETATION OF THE "MYSTERIOUS" VERB FORM OF THE RECENTLY DISCOVERED DNF INSCRIPTION: "BLESSING OR ADVICE?" 98-110

Noonik Darbinian
SOME CREATURES FOUND IN IRANIAN FAIRY TALES AND FOLKLORE 111-133

Tigran Candoyan
ETHNO-GEOGRAPHIC BOUNDARIES OF KURDISH NATIONALISM IN THE TERRITORY OF THE REPUBLIC OF TURKEY 134-144

TurkicStudies

Urazaeva K.B., Razumovskaya V.A., Safaryan A.V
LITERARY TRANSLATION AS A TYPE OF CULTURAL TRANSMISSION IN SOCIAL TRANSFORMATIONS CONTEXT. ABOUT KAZAKH LITERATURE TRANSLATIONS INTO ARMENIAN 145-166

Arshak Gevorgyan
THE PARAPOLITICAL PERCEPTION OF THE HYBRID NETWORK STRUCTURES OF SHADOW GOVERNANCE: THE TURKISH DEEP STATE 167-186

Margarita Krtikashyan
THE ROLE OF TIGRAN CHUKHAJIAN IN THE TURKISH MUSIC SCENE 187-200

Samvel Ramazyan
THE PERSONAGE OF EUROPEAN (FRANK) IN ARMENIAN AND TURKIC EPICS 201-223

Ani Voskanyan
ABOUT THE PECULIARITIES OF ECONOMIC LIFE IN THE CHORK-MARZPAN SUB-DISTRICT, ADANA PROVINCE 224-238

***

Ruslan Tsakanyan
CHRONOLOGICAL PROBLEMS OF ASSYRIAN HISTORY (EXTRA-LONG, LONG, MIDDLE, LOW, ULTRA-LOW DATES) 239-247

Hovhannes Khorikyan
THE TERRITORY AND BOUNDARIES OF CAPPADOCIA IN ACHAEMENID PERSIA 248-261

Գոռ Գևորգյան[1]

ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՍԻՐԻԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՆԿԱՏՄԱՄԲ. ԱԲԴԵԼ ՖԱԹԹԱՀ ԱԼ-ՍԻՍԻԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ (2013-2019թթ.)

Բանալի բառեր՝ *Եգիպտոս, Սիրիա, «արաբական գարուն», ճգնաժամ, անվտանգություն, պատերազմ*

2000-ականների երկրորդ տասնամյակը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում առավելապես աչքի ընկավ սկիզբ առած «արդիականացման և փոխակերպման» գործընթացներով, որոնք շատ հաճախ ուղեկցվում էին հուժկու բողոքներով և հուզումներով, իսկ որոշ երկրներում սկիզբ առան աղետաբեր պատերազմներ՝ ողջ տարածաշրջանը ներքաշելով խորքային ճգնաժամի մեջ, ինչն էլ կազմաքանդեց տարածաշրջանում ուժերի առկա հարաբերակցությունը[2]: Առկա ճգնաժամից, որն անկասկած կրում է համակարգային բնույթ, համապարփակ ելք մինչ օրս գտնված չէ:

Որոշ երկրներում օրինակ՝ Եգիպտոսում, Թունիսում, Մարոկկոյում, Հորդանանում, Սաուդյան Արաբիայում, մի փոքր ուշացումով, բայց և սկսվեցին սոցիալ-տնտեսական բարեփոխումները, սակայն դժվար կանխատեսելի արդյունքներով: Լիբիայում և Եմենում, իրավիճակը շատ ավելի բարդ է. այստեղ կատաղի պայքար է գնում, որը պայմանականորեն կարելի է ձևակերպել որպես աշխարհաքաղաքական առճակատման նոր ձև,

---

[1] Գոռ Գևորգյան, պ.գ.թ., դոցենտ, ՀՀԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի ավագ գիտաշխատող՝ orgevorgyan1976@gmail.com

[2] Влияние «арабской весны» на неарабские страны Ближнего Востока, Доклады РИСИ, Проблемы национальной стратегии, М., 2014, N4, с. 9, https://riss.ru/documents/353/1db9d9b094944d6ead6b0d1ac0540988.pdf

որտեղ, որպես գործիքակազմ, օգտագործվում է իշխանության լեգիտիմության մասին խոսույթը, ահաբեկչական կառույցները, վարձկաններ և իշխանափոխության հասնելու համար այլ միջոցներ[3]:

Այս ամենի արդյունքում տարածաշրջանում շարունակվում է անկայունությունը արտագաղթը[4]:

Մերձավոր Արևելքում հարաբերական, բայց տևական կայունության համար, էական են նաև արաբական մի շարք երկրների միջև կանոնավոր հարաբերությունների առկայությունը: Այս առումով, առանցքային և անչափ հետաքրքրական են եգիպտա-սիրիական հարաբերությունները և դրանց զարգացման դինամիկան:

Եգիպտա-սիրիական հարաբերություններն ավանդաբար առանցքային դերակատարություն ունեն ոչ միայն պաղեստինյան հարցի խաղաղ կարգավորման և արաբ-իսրայելական դիմակայության գործընթացում, այլև որոշակիորեն պայմանավորում են արաբական աշխարհի անվտանգային միջավայրի ձևավորումը՝ փորձելով նպաստել միջարաբական հարաբերուոթյուններում առկա տարբեր խնդիրների հաղթահարմանը[5]:

---

[3] The Arab Spring at Five: Updates On Tunisia, Egypt, and Turkey, Foreign Affairs. 08.02.16. https://www.foreignaffairs.com/articles/2016-02-08/arab-spring-five-updates-tunisia-egypt-and-turkey?gclid=EAIaIQobChMI84bwlOLb-wIVAd5RCh2vmQD3EAAYASAAEgIKH_D_BwE

[4] 2021թ. վերջին սիրիացի փախստականների թիվը հասնում է 5,7մլն.-ի, իսկ Սիրիայում շուրջ 13,4 մլն. մարդ գտնվում է հումանիտար ճգնաժամի մեջ: Մանրամասն տե՛ս՝ UNHCR/Global Focus, Syria situation, https://reporting.unhcr.org/syriasituation#:~:text=By%20the%20end%20of%202021,internally%20displaced%20people%20(IDPs).

[5]Արաբ-իսրայելական հակամարտության հարցում Հ. Քիսինջերը կարծում էր, որ արաբները չեն կարող պատերազմել առանց Եգիպտոսի և գնալ հաշտության առանց Սիրիայի. այդ երկու երկրները ռազմաքաղաքական կարևոր գործոն են: Տես՝ R. Hinnebush, Syrian Foreign Policy under Bashar al-Asad, p. 10, http://orsam.org.tr/d_hbanaliz/1hinnebusch.pdf

Արաբական երկների նորագույն պատմության տարբեր ժամանակահատվածներում երկու երկրների միջև հարաբերություններն անցել են թե՛ վայրիվերումների և թե՛ սերտ համագործակցության շրջաններ: Եգիպտա-սիրիական կանոնավոր և կայուն հարաբերություններն իրապես էական են փոխակերպվող արաբական աշխարհի և տարածաշրջանի համար: Դրանք կարող ենք դիտարկել որպես երկշերտանի քաղաքական իրողություն. որոշ դեպքերում երկու երկրներն էլ արտաքուստ ցուցաբերելով միմյանց նկատմամբ անհանդուրժողականություն, միևնույն ժամանակ տարբեր հարցերում պահպանում են շփումները և անգամ համագործակցում: Ակնհայտ է, որ երկու երկրների առճակատման հիմնական առանցքը, առնվազն մինչև սիրիական ճգնաժամը, արաբական աշխարհում առաջնորդության կարգավիճակի համար կատաղի մրցակցությունն էր: Եգիպտա-սիրիական հարաբերությունների հիմնադրույթների բովանդակությունը ընկալելու նպատակով հարկավոր է անդրադառնալ ոչ վաղ անցյալի որոշ իրողությունների:

Եգիպտա-սիրիական հարաբերությունների վերելքի շրջան կարելի համարել 1952-1967 թթ., երբ երկու երկրների միջև սերտ համագործակցությունը գերիշխող ուժ էր ոչ միայն միջարաբական հարաբերություններում, այլև որոշ առումով նաև տարածաշրջանում: Այս համագործակցության դրսևորումն արտացոլվեց 1958 թ. Արաբական Միացյալ Հանրապետության կազմավորմամբ: Երկու երկների միջև լարվածության նոր փուլ է սկսվում 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմում արաբների կրած պարտությունից հետո: Եգիպտոսը և Սիրիան միմյանց միջև լռելյայն անվստահությամբ 1973 թ. սկսեցին արաբ-իսրայելական պատերազմը:

Եգիպտա-սիրիական հարաբերությունների ճգնաժամը սկսվեց 1978 թ. քեմփ-դևիդյան համաձայնագրերի, իսկ 1979 թ.

եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագրի ստորագրումից հետո, որի հետևանքով Եգիպտոսն արաբական աշխարհում տևական ժամանակ հայտնվեց «քաղաքական մեկուսացման» մեջ: Սադաթին փոխարինած նոր նախագահ Հոսնի Մուբարաքի իշխանության առաջին տասնամյակում Եգիպտոսը կարողացավ վերականգնել իր խարխլված դիրքերը արաբական աշխարհում՝ վերադառնալով «արաբական ումմա»: Այդուամենայնիվ, եգիպտա-սիրիական հարաբերությունները դեռ հեռու էին ամբողջական կարգավորումից և իրենց խնդրահարույց հարցերով թևախոխեցին նաև հետ-«սառը պատերազմական» շրջան:

Եգիպտա-սիրիական հարաբերությունների համար փորձության նոր փուլ կարելի է համարել «արաբական գարնան» արդյունքում ստեղծված իրողությունները: 2011 թ. փետրվարին «արաբական գարնան» հետևանքով պաշտոնանկ արված Հոսնի Մուբարաքի տեղը 2012 թ. հունիսին արտահերթ ընտրությունների արդյունքում, զբաղեցրեց նորընտիր նախագահ Մուհամմեդ Մուրսին: Ի տարբերություն Մուբարաքի, նախագահ Մուրսին սատարեց սիրիական ընդդիմությանը՝ միանալով Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հրաժարականը պահանջող տարբեր ուժային կենտրոնների կոչերին: Ավելին, 2013 թ. հունիսին Եգիպտոսի նախագահը փակեց Կահիրեում սիրիական դեսպանությունը[6], սառեցրեց Սիրիայի հետ հարաբերությունները և կոչ արեց Սիրիան դարձնել ոչ թռիչքային գոտի[7]: Եգիպտոսի նախագահ Մուրսիի դիրքորոշումը, ըստ էության, պայմանավորված էր արաբական աշխարհի նավթարդյունաբերող

[6] Изменение позиций значимых региональных игроков в ходе сирийского кризиса, с. 18, Տես՝ c381301c41e7402aa940ebbc8be339ed.pdf (riss.ru)

[7] Morsi Cuts Egypt`s Syria Ties, Back No-fly Zone, June 15, 2013, Տես՝ https://www.voanews.com/a/egypt-syria-no-fly-zone/1682647.html, Եգիպտոսի նախագահ Մուրսին պահանջեց նաև անհապաղ դուրս բերել Սիրիայից լիբանանյան «Հիզբալլահ»-ի բոլոր ստորաբաժանումները:

երկրների մոտեցումներով՝ ակնկալելով վերջիններից համապատասխան ֆինանսական ներդրումներ:

Հարկ է նշել, որ 2011թ. նոյեմբերին սառեցվեց Սիրիայի անդամակցությունն Արաբական պետությունների լիգայում[8], իսկ 2012 թ. օգոստոսին՝ Իսլամական համագործակցություն կազմակերպությունում[9]:

Եգիպտա-սիրիական հարաբերություններին նոր շունչ է հաղորդում 2013 թ. հուլիսի 3-ին Եգիպտոսում պետական հեղաշրջման արդյունքում իշխանության եկած Աբդել Ֆաթթահ ալ-Սիսին: Էական է նշել, որ համաձայն Եգիպտոսի արտաքին քաղաքական ավանդույթի՝ պետության տարածաշրջանային քաղաքականությունն ունի մի քանի ուղղություն՝ աֆրիկյան, իսլամական և արաբական[10]: Գալով իշխանության, ալ-Սիսին տարածաշրջանային քաղաքականության առաջնահերթություն է դարձնում եգիպտա-լիբիական, եգիպտա-եմենյան, եգիպտա-սիրիական և եգիպտա-սաուդական հարաբերությունները[11]:

2013 թ. հուլիսի 7-ին, ալ-Սիսիի իշխանության գալուց չորս օր հետո, Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը հայտարարում է Դամասկոսում Եգիպտոսի հյուպատոսության աշխատանքների վերսկսման մասին[12]: Նույն օրը եգիպտա-

[8] Տես՝ Syria suspended from Arab League, Nov. 2011, https://www.theguardian.com/world/2011/nov/12/syria-suspended-arab-league

[9] The Organization of Islamic Cooperation (OIC) has suspended Syria`s membership, siting President Assad`s violent suppresion of a 17-month uprising. The move followed reports of further civilian deats in regime raids, https://www.dw.com/en/islamic-bloc-suspends-syria-membership-over-crisis/a-16169355

[10] Տես՝ Egypt`s foreign policy within a challenging regional context https://www.europarl.europa.eu/thinktank/en/document/EPRS_BRI(2021)698062

[11] Burning ambition: Egypt`s return to regional leadership and how Europe should respond 11.10.2021, https://ecfr.eu/publication/burning-ambition-egypts-return-to-regional-leadership-and-how-europe-should-respond/

[12] Egypt and Syria to keep consulate relations: FM spokesperson, Ahram online. 2013. 7 July, https://english.ahram.org.eg/NewsContent/1/64/75951/Egypt/Politics-/%20Egypt-and-Syria-to-keep-consulate-relations-FM-spo.aspx

սիրիական կողմի որոշմամբ՝ Կահիրում վերաբացվում է նաև սիրիական հյուպատոսությունը[13]: Արդեն հուլիսի 20-ին Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Նաբիլ Ֆահմին հայտարարում է, որ Կահիրեն «Սիրիայում ջիհադ չի վարելու», այլ սատարելու է Սիրիայի իշխանություններին[14]:

Երկու երկների միջև մերձեցման մեկնարկը ըստ էության տրված էր: Այդ առումով, ալ-Սիսիի տարածաշրջանային քաղաքականության սիրիական ուղղությունն աստիճանաբար սկսեց ինստիտուցիոնալացվել: Ավելին, Եգիպտոսի նախագահը սիրիական հարցում սկսեց ներազդել նաև Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների՝ Սիրիայի նկատմամբ դիրքորոշման վրա: Վերջիններս, ինչպես հայտնի է ոչ միայն դատապարտում էին Բաշար ալ-Ասադի իշխանությանը, այլև հնարավորինս աջակցում սիրիական կառավարական ուժերի դեմ կռվող պայմանական ասած ընդդիմադիրներին: Միևնույն ժամանակ, Սաուդական թագավորության և ԱՄԷ-ի հետ Սիրիայի հարցի շուրջ իր քննարկումներում, ալ-Սիսին բավականին զգուշավոր էր, քանի որ առաջնահերթ էր համարում եգիպտական տնտեսությունում Ծոցի արաբական երկրներից ակնկալվող ներդրումների հանգամանքը: Ալ-Սիսին հաշվի էր առնում այն, որ ՍԱԹ-ը և ԱՄԷ-ն Եգիպտոսի դաշնակիցներն էին և ողջունեցին իր իշխանության գալը[15]:

---

[13] Նույն տեղում:

[14] Egypt to re-evaluate relations with Syria, Al Jazeera Media Network, 2013. 21 July, Egypt to re-evaluate relations with Syria | News | Al Jazeera

[15] 2013-2015 թթ. ընթացքում Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ն և Քուվեյթը Եգիպտոսին տրամադրել էին շուրջ 30 մլրդ. ԱՄՆ դոլար՝ որպես արտոնյալ վարկային միջոցներ և դրամաշնորհներ: Մանրամասն տե՛ս՝ Saudi Arabia, UAE, Kuwait strong backers of Egypt`s economy, March 14, 2015, https://dailynewsegypt.com/2015/03/14/saudi-arabia-uae-kuwait-strong-backers-of-egypts-economy/
Egypt`s Economic Profile and Statistics. Cairo: the Egyptian Center for Economic Studies, 2017, p. 11,

2014 թ. ԱՄՆ կատարած իր առաջին այցի ժամանակ Սիսին լրատվամիջոցներին տրված հարցազրույցում ընդգծեց, որ Սիրիան Եգիպտոսի ռազմավարական գործընկերն է, և միևնույն ժամանակ կոչ արեց հարգել Սիրիայի տարածքային ամբողջականությունը[16]:

Արդեն 2014 թ. դեկտեմբերին կայացավ սիրիական պաշտոնական պատվիրակության այցը Կահիրե: Պատվիրակության մեջ ընդգրկված էին Սիրիայի արաբական ակադեմիայի ներկայացուցիչներ[17]:

Հետաքրքրական է «Ժողովրդավարության պաշտպանության հիմնադրամի» նախկին փոխտնօրեն Օրեն Քեսլերի դիտարկումը եգիպտա-սիրիական հարաբերություններին: Քեսլերը կարծում էր, որ Եգիպտոսի համար Սիրիայի հետ մերձեցման հարցում բեկումնային ~~հանդիսացավ~~ դեր խաղացին 2015 թ. սեպտեմբերին ՌԴ ռազմական գործողությունները «Իսլամական պետության դեմ», որով ըստ էության, վերստին կարևորվեց Բաշար Ասադի կերպարը, որպես պետության ղեկավար»[18]:

Եգիպտա-սիրիական հարաբերությունների մերձեցման գործընթացում էական կարելի է համարել նաև 2015 թ. Կահիրեում, Սիսիի և Սիրիայի Ազգային անվտանգության ծառայության ղեկավար Ալի Մամլուքի հետ հանդիպումը, որի ընթացքում քննարկվեցին երկու երկրների անվտանգությանը վերաբերող մի շարք հարցեր[19]:

2016 թ. վերջին Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հայտարարեց, որ եգիպտա-սիրիական հարաբերությունները

[16] Situation of the Egyptian-Syrian Relations, https://en.eipss-eg.org/situation-of-the-egyptian-syrian-relations-2012-2021/
[17] Sievers M. Questions About Egypt's Syria Policy, The Washington Institute for Near East Policy, 2015, https://www.washingtoninstitute.org/policy-analysis/questions-about-egypts-syria-policy
[18] Kessler O. Egypt Picks Sides in the Syrian War, Foreign Affairs, 2017, 12 February, How Sisi Picked Sides in the Syrian Civil War | Foreign Affairs
[19] Situation of the Egyptian-Syrian Relations, նշվ. աշխ.:

գնահատվում են դրական և, որ դրանք հիմնականում առնչվում են անվտանգությանը[20]: Սիրիական ճգնաժամի հաղթահարման գործում Եգիպտոսի ներգրավվածության մասին է վկայում է այն, որ 2017 թ. օգոստոսին Ալ-Սիսիին հաջողվեց զգալիորեն նպաստել սիրիական Արևելյան Ղուտայում և Հոմսից արևմուտք ընկած տարածքներում կրակի դադարեցման վերաբերյալ հրադադարի ստորագրմանը[21]:

Եգիպտոսի ջանքերը Սիրիայի հետ կանոնավոր հարաբերություններ հաստատելու հարցում ակներև է նաև Կահիրեի դիրքորոշումը ԱՊԼ-ում Սիրիայի անդամակցության վերականգնման հարցում: 2019 թ. մարտին Եգիպտոսի արտաքին գործերի նախարար Սամեհ Շուքրին հայտարարեց, որ Արաբական պետությունների լիգայում Սիրիայի անդամակցությունը վերականգնելու հարցում Եգիպտոսը նախապայման չունի[22]: Այս ամենը պարզորոշ ի ցույց է դնում նախագահ Սիսիի դիրքորոշումը եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավման և լիարժեք վերականգնման անհրաժեշտության վերաբերյալ, որն արաբական աշխարհի ներկա իրողություններում Եգիպտոսի համար ունի առաջնահերթ անվտանգային բաղադրիչ: Այդ առումով, եգիպտա-սիրիական հարաբերությունների թիրախում են ահաբեկչության դեմ պայքարը. Եգիպտոսի անվտանգության սպառնալիքներից է համարվում «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը, որը հաճախ օգտագործվել է նաև արտաքին ուժերի կողմից Եգիպտոսում ներքաղաքական իրավիճակը ապակայունացնելու նպատակով: Ավելին, Սինայի թերակղզում տևական ժամանակ գործում էր 2014

[20] Նույն տեղում:
[21] Նույն տեղում:
[22] Syria chooses to remain out of Arab League amid mixed reactions, 10.09.2022, https://www.dailysabah.com/world/mid-east/syria-chooses-to-remain-out-of-arab-league-amid-mixed-reactions

թ. հռչակված «Սինայի Վիլայաթ» իսլամիստական խմբավորումը, որը մաս էր կազմում Սիրիայում ստեղծված «Իսլամական պետության» կազմավորմանը: «Սինայի Վիլայաթ»-ի, «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպության և «Իսլամական պետության» դեմ պայքարում եգիպտա-սիրիական շահերն ամբողջությամբ համընկնում էին և անգամ գտնվում են սերտ համագործակցության ուշադրության ծիրում:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ եգիպտա-սիրիական հարաբերությունների լիակատար և ամբողջական վերականգնման համար առկա են նաև մի շարք խոչընդոտներ.

- Եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավման հարցում Ալ-Սիսին դեռևս հաշվի է առնում սիրիական ճգնաժամի նկատմամբ ԱՄՆ-ի դիրքորոշումը և հետևաբար Սիրիայի հետ մերձեցման հարցում ալ-Սիսին որդեգրել է բավական հավասարակշռված քաղաքականություն:
- Եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավման հարցում ալ-Սիսին չի կարող անտեսել իսրայելա-սիրիական առճակատումը, մանավանդ այն պարագայում, որ Եգիպտոսի և Իսրայելի միջև կանոնավոր կերպով գործում են քեմփդեվիդյան համաձայնագրերը և եգիպտա-իսրայելական հաշտության պայմանագիրը
- Եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավման հարցը չի կարող խոչընդոտ դառնալ Եգիպտոս-Ծոցի երկրներ հարաբերություններին: Եգիպտական տնտեսության համար էական են Ծոցի արաբական երկրներից ստացվող ֆինանսական ներդրումները: Վերջիններս, ինչպես հայտնի է դեռ շարունակում են վերապահումով մոտենալ Բաշար ալ-Ասադի լեգիտիմությանը:
- Եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավումը ժամանակի հարց է, քանի—երկու երկների

մերձեցումը ունի կենսական նշանակություն, որը դրսևորվել է արդի պատմության տարբեր շրջաններում: Այդ հարաբերությունները մաս են կազմել համաարաբական անվտանգային համակարգին:

- Եգիպտա-սիրիական հարաբերությունների բարելավման ուղղությամբ ալ-Սիսիի քաղաքականությունն արաբական աշխարհում Եգիպտոսի որոշակի հեղինակության բարձրացման և ընդլայնման փորձի ապացույց է:

ПОЗИЦИЯ ЕГИПТА В ОТНОШЕНИИ СИРИЙСКОГО КРИЗИСА: ВРЕМЯ ПРЕЗИДЕНТСТВА АБДЕЛЬ ФАТТАХА АЛЬ-СИСИ

Гор Геворгян

(Резюме)

Процессы модернизации и трансформации, начавшиеся в результате «арабской весны», разрушили хрупкую систему безопасности арабского мира. В некоторых арабских, таких как Сирия, Ливия и Йемен, начались вооруженные столкновения, переросшие в прокси-войну.

В этом контексте особенно важным становится взаимоотношения между теми арабскими странами, которые некоторым образом являются частью системы безопасности региона.

Египетско-сирийские отношения являются одним из ключевых компонентов военно-политических процессов на Ближнем Востоке. На пути становления этих отношений, обе страны прошли через долгий путь испытаний и вызовов. Пришедший к власти в Египте в результате «арабской весны» президент Мухаммед Мурси примкнул к сирийской оппозиции, заморозив дипломатические отношения с Сирией и присоединился к осуждающим сирийского президента Башара Асада силам.

Новый виток египетско-сирийским отношениям был дан пришедшим с помощью переворота к власти новым президентом Египта Абдель Фаттахом аль-Сиси. Новый президент Египта не только восстановил с Сирией дипломатические отношения, но и начал лоббировать позиции Сирии в арабском мире, тем самым подчеркивая важность репутации и солидности статуса самого Египта.

EGYPT`S POSITION ON THE SYRIAN CRISIS: DURING THE PRESIDENCY OF ABDEL FATTAH AL-SISI

Gor Gevorgyan

(Summary)

The fragile security structure of the Arab world was undermined by the modernization and transformation processes that commented with the «Arab Spring». In various Arab countries, such as Syria, Libya and Yemen, armed confrontations erupted, escalating into proxy wars. In this setting, the importance of relations that are a member of the region`s security system increases. The Egyptian-Syrian relationship is a crucial aspect of the military-political dynamics in the Middle East. On the long road to developing these ties, both nations have faced several obstacles and difficulties. Egypt`s President Mohammed Morsi, who ascended to the office due to the «Arab Spring», supported the Syrian opposition, froze diplomatic relations with Syria, and joined forces criticizing Syrian President Bashar al-Assad.

Abdel Fattah al-Sisi, the new president of Egypt who came to power in a military coup, initiated a new phase of Egyptian-Syrian ties. Not only did the new president of Egypt restore diplomatic relations with Syria, but he also began lobbying for Syria’s standing in the Arab world, highlighting the significance of Egypt`s reputation and status.